ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ֆինանսական ռազմավարության ազգային քաղաքականության երկխոսությանը

Աշխատանքային խմբի 4-րդ հանդիպման 1-ին սեսսիայի արձանագրություն

Կոնգրեսս հյուրանոց, 2008թ. մարտի 11, Երևան, Հայաստան

Աշխատանքային խմբի անդամներ.

Նախարարություններ, վարչություններ և կազմակերպություններ.

Գ. Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ (աշխատանքային խմբի նախագահ)
Վ. Նարիմանյան	ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ
Ա. Մարտուսևիչ	ՏՀԶԿ հանձնաժողովի քարտուղարություն, Բնապահպանության և գլոբալիզացիայի բաժին, Բնապահպանության տնօրինություն
Լ. Էնդերլեին	UNECE
Դ. Դորոգան	ԵՄ հանձնաժողով, ջրի և ծովային նավահանգիստների բնապահպանություն
Հ Եսայան	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ջրային տնտեսության ծրագրերի բաժնի պետ
Ա. Արշակյան	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ
Յու. Պողոսյան	ՀՀ Ազգային Վիճակագրական ծառայության խորհրդի անդամ
Է. Փիրումյան	ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության բաժնի պետ
Ա. Մալխասյան	Հայջրմուղկոյուղի ՓԲԸ հասարակայնության հետ կապերի տնօրեն
Ա. Հովսեփյան	Երկրի ջրային համագործակցության ՀԿ խորհրդի անդամ
Ե. Անախասյան	Հայաստանի կանայք առողջության և առողջ բնապահպանության համար ՀԿ
Յ. Յանքսեն	Կիրառական բնապահպանական տնտեսության ինստիտուտի տնօրեն

Միջազգային կազմակերպություններ

Ա. Խաչանյան	KfW Հայաստանյանի գրասենյակի ծրագրի օգնական
Մ. Վարդանյան	ԱՄՆ ՄԶԳ Հայաստանյան գրասենյակի բնապահպանության և բնական ռեսուրսների մասնագետ
Ա. Սաքս	EBRD Երևանյան գրասենյակի ավագ վերլուծաբան
Ա. Սիմոնյան	Հազարամյակի մարտահրավերներ – Հայաստան, բնապահպանության և սոցիալական ազդեցության մասնագետ
Ա. Մարտիրոսյան	UNDP Հայաստանյան գրասենյակի բնապահպանական փաթեթի ծրագրի վերլուծաբան
Հ. Ղազարյան	REC Կովկաս Հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի համակարգող

Հրավիրվածներ

Մ. Մկրտումյան	ՀՀ ՋՏՊԿ ֆինանսատնտեսագիտական, հաշվառման և իրացման վարչության պետ
Վ. Տոնոյան	JICA-ի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և իրացման ծրագրի ինստիտուցիոնալ մասնագետ
Ա. Բաբսեղյան	ADB Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ
Ա. Ղազարյան	Փորձագետ

Հանդիպման օրակարգ

11:00 – 11:15	Մասնակիցների գրանցում
11:15 – 11:45	Բացման խոսք

Սեսսիա 1: Ջրամատակարարում և ջրահեռացում

11:45 – 12:25	Հայաստանի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ֆինանսական ռազմավարությունը: Քաղաքականության փաթեթների ներկայացում (մաս 1-ին)
12:25 – 12:45	Հարցեր ու պատասխաններ, քննարկումներ
12:45 – 13:20	Հայաստանի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ֆինանսական ռազմավարությունը: Քաղաքականության փաթեթների ներկայացում (մաս 2-րդ)
13:20 – 13:40	Հարցեր ու պատասխաններ, քննարկումներ
13:40 – 13:50	Ազգային երկխոսության քաղաքականության դերը ֆինանսական ռազմավարության զարգացման գործում
13:50 – 14:00	Նախագահի կողմից արված դիտողությունների ամփոփում

Սեսսիա 2: Կազմակերպչական խնդիրներ

15:00 – 15:20	Ազգային քաղաքականության երկխոսության պատասխանատվության փոխանցում ՋՏՊԿ/OECD-ից ՋՌԿԳ/UNECE-ին

Սեսսիա 3-րդ: Ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարում (IWRM)

15:40 – 16:00	Ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման քաղաքական երկխոսությունը և IWRM-ի համակարգող խմբի դերն ու գործառույթը
16:00 – 16:20	IWRM – Հայաստանում ազգային և ջրամբարային մակարդակներով գործունեությունը
16:20 – 17:00	Հիմնական քննարկումներ և եզրակացություններ

Սեսսիա 1 – նախագահում է պրն. Գ. Խաչատրյանը, ՀՀ ՋՏՊԿ

Քննարկումներ, առաջարկություններ և որոշումներ՝ կայացված Սեսսիա 1-ի օրակարգի հիման վրա.

1. Ընդունել ի գիտություն «Հայաստանում գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ֆինանսական ռազմավարության ազգային քաղաքական երկխոսության» խորհրդատուի նախագծային վերջնական հաշվետվությունը: Առաջարկվել են հետևյալ փոփոխությունները.
   - KfW բանկի դրամաշնորհը՝ 3.9 մլն Եվրո չպետք է դիտարկվի որպես սցենարի ֆինանսի մի մաս, քանի որ այս գումարը նախատեսված է կառավարման պայմանագրերի համար (որի համար ծախսերը ներառված չեն ֆինանսական ռազմավարության մեջ);
   - Ընդունել ի գիտություն, որ ներկայիս ներքին ցանցերի նորացումն ու օպտիմալացումը ավելի թանկ կարող է լինել, քան հաշվետվության մեջ նշված 27 բիլլիոն դրամը՝ օպտիմալացման համար պահանջվող լրացուցիչ ծախսերի պատճառով;
   - Նշել, որ «Բնությունը» ձևավորում է կարևոր ներդրում ջրամատակարարման բնագավառում (որը հետագայում կմշակվի Ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման Համակարգող խմբի աշխատանքների շարունակման միջոցով);
   - Վերջնական հաշվետվության մեջ ավելացնել բաժին՝ ջրահեռացման հնարավոր արժեքների վերաբերյալ:

Համակարգող խմբի հանդիպումը հավաստում է, որ.

2. Նվազագույն ջրի ստանդարտները ընդունվել են Համակարգող խմբի կողմից և կներկայացվեն համապատասխան կառավարման մարմին: Իրավական կարգավիճակը կորոշվի հետագա քննարկումների արդյունքում;
3. Որոշում կայացնելու համար անհրաժեշտ է մշակել և պահպանել Հայաստանում գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների և ծառայությունների տվյալների բազա, որի նպատակով Վիճակագրական ծառայությունը պետք է օգնի մշակելու ֆորմատը և իրականացումը (ինչպես նաև դրա կարիքն ունի բարեփոխված վիճակագրությունը);
4. Վերջնական նախագծային հաշվետվության մեջ բերված հաշվարկներում կապիտալ ծախսերը ներառված են անհրաժեշտ հնարավոր ջրի սակագնի աճի գնահատման մեջ (75%-ը ջրամատակարարման նվազագույն ստանդարտների (MWSS) մեջ և 100%-ը քաղաքականության մեջ);
5. Ֆինանսական ռազմավարության իրականացման նպատակով պետք է քննարկվեն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտային ծրագրերի իրականացման միավորները: Նպատակահարմար է դիմել տարբեր դոնոր կազմակերպությունների, որոնք կարող են ցանկություն հայտնել ֆինանսական օժանդակություն ցուցաբերել նմանատիպ միավորում հիմնելու հանդեպ:

Աշխատանքային խմբի հանդիպումը

6. Քննարկվեց 2008թ. մարտի 31-ը, որպես վերջնական նախագծային հաշվետվության վերաբերյալ լրացուցիչ առաջարկությունների և նշումների ներկայացման ժամանակահատված:
7. Տեղեկացվեց, որ աշխատանքային հանձնաժողովի հանդիպումներին վերաբերող բոլոր փաստաթղթերը տեղակայված են www.tme.nu/english/Arm_Stee8ing_Committee. htm կայքում:

Սեսսիաներ 2 և 3 – Նախագահում է պրն. Նարիմանյանը (նոր նախագահ)

Սեսսիա 2: OECD-ից UNECE-ին, որպես Հայաստանի ազգային քաղաքականության երկխոսության ռազմավարական գործընկեր, պարտականությունների հանձնում.
Համաձայն «Ազգային քաղաքականության երկխոսության համընդհանուր համաձայնագրի», երկխոսության գործընթացի պարտականությունները Ջրային տնտեսության պետական կոմիտեից (ՀՀ տարածքային կառավարման նախարարություն) OECD-ի հետ միասին, որպես ռազմավարական գործընկեր, փոխանցվել են Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությանը (ՀՀ բնապահպանության նախարարություն) UNECE-ի հետ միասին, որպես ռազմավարական գործընկեր:

Հետևաբար, պրն. Նարիմանյանը, որը հանդիսանում է Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ, դառնալով Համակարգող խմբի նոր նախագահ, պետք է ուղեցույց սահմանի և Ազգային քաղաքականության երկխոսությանը ներկայացնի ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման խնդիրների հիմնավորումը, մինչդեռ պրն. Յու. Պեպանյանը պետք է նշանակվի նոր Համակարգող խմբի անդամ:

1. ՀՀ բնապահպանության նախարարը հրավիրել է այլ նախարարությունների և գործակալությունների, ինչպես նաև ՀԿ-ների՝ դառնալու նոր Համակարգող խմբի անդամներ:
2. Նոր ձևավորված Համակարգող խմբի հանդիպումը ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման խնդիրների վերաբերյալ նախատեսվում է կազմակերպել մոտավորապես 2008թ. մայիսի 29-30-ին՝ Երևանում: Հանդիպման օրակարգի մշակումը կավարտվի ապրիլի կեսին:

Սեսսիա 3: Քաղաքականության երկխոսության ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման խնդիրները

Համակարգող խումբը.

1. Քննարկեց 2007թ. հուլիսի 30-ի «Ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման ազգային քաղաքականության երկխոսության գործողությունների ծրագիրը» և առաջարկեց թարմացնել այն, հաշվի առնելով, որ աշխատանքի արդյունքները իրականացվել են 2007թ.-ին:
2. Նշեց, որ «Էկոհամակարգերի ծառայությունների վճարներին» և «կլիմայի փոփոխության հարմարվելիության միջոցառումներին»վերաբերող խնդիրները նույնպես կարող են քննարկվել, համապատասխանաբար
3. Երաշխավորվեց, որ նոր Համակարգող խումբը պետք է վերջնականապես հաստատի գործողությունների ծրագիրը:

Գագիկ Խաչատրյան
Համակարգող խմբի նախագահ
ՀՀ տարածքային կառավարման նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտեի
նախագահի առաջին տեղակալ

Վոլոդյա Նարիմանյան
Համակարգող խմբի նոր նախագահ
ՀՀ բնապահպանության նախարարության
ջրային ռեսուրսների կառավարման գործակալության
պետի տեղակալ